978

1. Չար ու խարդախ այս աշխարհում
Մոլորվել էր իմ հոգին,
Դառը ողբում, անհույս լալիս,
Փնտրում էր ինչ-որ մեկին:
Մեկ էլ հանկարծ քնքուշ մի ձեռք
Սրբեց արցունքն աչքերիս.
Դա Հիսուսն էր, Նա եկել էր,
Որ փրկեր տանջված հոգիս:

2. Երբ որ տեսա ես իմ Փրկչին,
Ընկա ոտքերի առջև,
Խոցված ոտքերն համբուրեցի,
Հոգուս մեջ ծագեց արև:
Այն ժամանակ սերը տիրեց
Ալեկոծված իմ սրտին,
Ես հասկացա, որ գտել եմ
Իմ Տիրոջը, իմ Փրկչին:

3. Փրկչի գրկում գտա հանգիստ,
Ես գտա կյանք ապահով,
Էլ չունեմ ցավ, էլ չունեմ վախ,
Հիսուս ունեմ փառավոր:
Տե՛ր իմ Աստված, շնորհակալ եմ,
Որ ինձ այդքան սիրեցիր,
Երկինք տանող ճանապարհին
Անարժանիս դրեցիր:

4. Իմ Տե՛ր Հիսուս, Դու ես կյանքը,
Ճշմարտությունն ու ճամփան,
Տե՛ր, Քո խոսքը կենաց ջուր է,
Դեղ ու լույս է ինձ համար:
Ա՜խ, որքան եմ փափագում ես
Իմ աչքերով Քեզ տեսնել.
Եվ հավիտյան Քո գրկի մեջ
Կուզեմ հանգիստս գտնել:

Պատրաստված է Հոգևոր Արխիվի Կողմից | hogevorarchive.com | ergaran.com | 2025